Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(31 օգոստոսի, 2014 թ.)

Մեծարգո Տիար Արմեն Աշոտյան՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար, հարգարժան ռեկտորներ բարձրագույն կրթական հաստատությունների, կրթության գործի պատվարժան պատասխանատուներ ու մշակներ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ:

Մեծ խորհուրդ ունի գեղեցիկ այս ավանդույթը, որ նոր ուսումնական տարին մեր երկրի կրթության ոլորտի պատասխանատուներն սկսում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում միասնական աղոթքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից է սկիզբ առել հայ գրի ուղին՝ հավատքով ու գիտությամբ լուսավորելու մեր ժողովրդի հոգին, հանճարացնելու գիտության եւ իմացության սիրով, հաստատելու ճշմարիտ ուղիներում, զորացնելու եւ պահպանելու հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը: Հոգեխնամ այս առաքելությունը բարեբերությամբ շարունակելու հայցով առ Ամենակալ՝ Մենք գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում Ձեզ եւ շնորհավորում 2014-2015 ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկի առիթով:

Այս օրերին հայրենի կրթական մեր բոլոր հաստատությունները դարձյալ հրավեր են ուղղում մեր սիրասուն զավակներին՝ քայլելու գիտելիքի եւ իմաստության ամբարման ճանապարհով, զորացնելու ազգային ու հոգեւոր նկարագիր, դպրության եւ մշակույթի նկատմամբ սերն ու ճանաչողությունը:

Մեր ժողովուրդը միշտ կարեւորել է գիտելիքը եւ ուսումը, որոնք, հակառակ կրած նեղությունների, էական եւ հիմնարար նշանակություն են ունեցել ազգային մեր կյանքում եւ բազմադարյա մշակույթում: Այսօր եւս մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ

մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ գիտակից քաղաքացու դերը: Սուրբգրային խոսքի համաձայն՝ տունը շինվում է իմաստությամբ եւ հաստատվում հանճարով, եւ գիտությամբ են շտեմարանները լցվում ամենայն պատվական հարստությամբ եւ բարիքով (Առակ. ԻԴ. 3-4):

Սիրելիներ՛ը, գաղտնիք չէ, որ Հայաստանի անկախությանը հաջորդած դժվարություններն ու մարտահրավերներն իրենց հետքն են թողել նաեւ կրթության ասպարեզում: Ամբողջ մի սերունդ հասակ առավ, երբ մեր երկիրը գտնվում էր պատերազմական իրավիճակում, տնտեսական ու սոցիալական ծանր փորձությունների մեջ: Այսօր ուրախալի է տեսնել, որ ինչպես մեր ժողովուրդը, այնպես եւ հայրենի կառավարությունը ամենայն հոգածությամբ ջանքեր են բերում, որպեսզի մեր նոր սերունդն առավել կրթված լինի, հաղորդ՝ համամարդկային ձեռքբերումներին:

Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցներին եւ անձամբ նախարար Տիար Արմեն Աշոտյանին, ով տարիներ շարունակ ձեռնահասորեն ղեկավարում է նախարարությունը եւ իր ավանդը բերում այս կարեւոր ոլորտում նորանոր հաջողությունների կայացմանը:

Մեր գնահատանքն ենք բերում նաեւ կրթության բոլոր մշակներիդ եւ մաղթում, որ Բարձրյալն Աստված միշտ զորակից ու ապավեն լինի ձեզ ձեր ազգանվեր ծառայության մեջ:

Այս խորախորհուրդ պահին, երբ ամենքդ ուխտավորաբար եկել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Աստծո առաջ աղոթելու եւ հոգեպես նորոգվելու, մեր հայցն է առ Բարերար Տերը, որ զորացնի ձեզ Իր շնորհներով: Աղոթում ենք, որ Տիրոջ օրհնությամբ ուսման սերը անբաժան լինի մեր զավակների սրտերից: Թող ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն Ձեր նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր արժեքներով դաստիարակության եւ մեր Հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ